ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Քաղաքացիական գործ թիվ ԵԴ2/3907/02/23

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ՆԱԽՆԱԿԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՆԻՍՏ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

31 մայիսի 2024թ. ք.Երևան

Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը (դատավոր՝ Գ. Գրիգորյան) (այսուհետ՝ Դատարան),

ծանոթանալով «Կապիտալ Դիզայն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի, ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձ ՀՀ Ֆինանսների նախարարություն՝ հայցվորին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին 10.04.2023թ. կայացած 774-Ա որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին քաղաքացիական գործի նյութերին և քննարկելով նախնական դատական նիստ նշանակելու հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Հայցվորի անունից ներկայացված հայցադիմումը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի (դատավոր՝ Ս. Խաչատրյան)՝ 19.05.2023թ. որոշմամբ ընդունվել է վարույթ, իսկ 21.07.2023թ. վճռով հայցն ամբողջությամբ բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը 19.03.2024թ. որոշմամբ, բավարարելով պատասխանողի անունից ներկայացված վերաքննիչ բողոքը, բեկանել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի 21.07.2023թ. վճիռը՝ գործն ուղարկելով Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան նոր քննության:

Ի կատարումն ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 19.03.2024թ. որոշման՝ սույն քաղաքացիական գործը 24.05.2024թ. ստացվել և մակագրվել, իսկ 30.05.2024թ. հանձնվել է դատավոր Գ. Գրիգորյանի աշխատակազմին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 411-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանի եզրափակիչ դատական ակտը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու մասին դատական ակտ կայացնելու դեպքում դատարանը գործն ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում, կայացնում է գործը վարույթ ընդունելու մասին որոշում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 166-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ առաջին ատյանի դատարանը (...) վերադաս դատարանից գործն ստանալու օրվան հաջորդող եռօրյա ժամկետում որոշում է կայացնում նախնական դատական նիստ նշանակելու վերաբերյալ, որն ուղարկվում է գործին մասնակցող անձանց:

Տվյալ դեպքում Դատարանը գտնում է, որ սույն քաղաքացիական գործը պետք է ընդունել վարույթ և նշանակել նախնական դատական նիստ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ, 27-րդ, 165-րդ, 166-րդ, 199-րդ, 200-րդ և 411-րդ հոդվածներով՝ Դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Քաղաքացիական գործն ընդունել վարույթ:

2. Նախնական դատական նիստ նշանակել 27.06.2024թ. ժամը 11:30-ին, Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի Էրեբունու նստավայրում:

Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ԴԱՏԱՎՈՐ՝ Գ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Քաղաքացիական գործն ընդունել վարույթ:

2. Նախնական դատական նիստ նշանակել 27.06.2024թ. ժամը 11:30-ին, Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի Էրեբունու նստավայրում:

Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ԴԱՏԱՎՈՐ՝ Գ. ԳՐԻԳՈՐՅԱՆ